«Եվ այս ցվերն էլ՝ Ձեզ»

«Սիրելի Ֆադեյ Տաճատի, թույլ տվեք սրտանց շնորհավորել՝ Ձեր ծննդյան տարեդարձի առթիվ, մաղթել քաջառողջություն, ստեղծագործական ավյուն, բազում հաջողություններ, Աստված Ձեզ օգնական: Առո՛ղջ լինեք, շա՜տ պայծառ մնաք: Միշտումիշտ: Եվ այս ցվերն էլ՝ Ձեզ: Թող որ միշտ հիշատակ լինի այս պայծառ օրվա եւ պայծառ զգացմունքների»:

Այս ասելուն պես, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ֆադեյ Սարգսյանին**՝ իր 77-ամյակի առթիվ երեկ մի ներկայացուցչական փաթեթ ցվիրեց ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը: Նվերը Գայֆեջյանի ցկարներից մեկն էր, որը հոբելյարը գնահատեց որպես *«չտեսնված, մեծ մակարդակի ցկար»:*

Թե որքան շոյված ու զգացված էր Ֆադեյ Սարգսյանը իր թանկագին հյուրի ներկայությունից, հեշտ չէ ցկարագրելը: Իսկ բանն այսպես է եղել. *«Այսօր նաեւ Վիկտոր Համբարձումյանի ծննդյան օրն էր եւ մենք՝ ակադեմիկոսների մի խմբով, այդ օրն էինք ցշում: Ես էլ շնորհավորանքներ ստացա: Բայց էդ իսկի պատվի ես, ցիշտն ասած, պատրաստ չէի արժանանալու»:* Սինչ հարգարժան հոբելյարն արտաբերում էր երախտիքի վերոնշյալ խոսքերը, Արմեն Խաչատրյանին ոչինչ չէր մնում անել, բացի 22-ցջալուց՝ *«Հիացած եմ»:*

Խորհրդարանի խոսնակի արժանիքներից ամենագլխավորը համարում են հիանալի ճառեր եւ կենացներ ասելը: Եվ դրանում համոզվելու համար բավական էր լսել, թե ինչ գերադրական անվանումներ «երիցս» շռայլեց Ֆադեյ Սարգսյանի հասցեին. *«Ես ուզում եմ ջերմորեն շնորհավորել Ֆադեյ Սարգսյանին, մեծ մարդուն, որի արժեքը ոչ միայն յուրաքանչյուրս իմանանք, որն, իսկապես, իր հոգում կրում է արժանապատվությունը [...], ուսերին՝ հայկական ամբողջ արժեքները: Հոգեբանական արժեքները կրող մտավորական է: Յուրաքանչյուր հայ խիստ պարտական է նրան իր խիստ մեծ մտահոգության համար: Եվ այսօր եթե մենք ունենք Ակադեմիա՝ ոչիոչնված, գիտական ինստիտուտներ, եթե Ակադեմիայի կոլեկտիվը կարողացել է հարգանքի առումով արժանին մատուցել Ֆադեյ Տաճատիչին, դա անոչյնանորեն բխում է իր մարդկային ցկարագրից, մեծ գիտնականի ոչիվածքից, մեծ մտավորականի ոչիվածքից»:* Սակայն սա դեռ բոլորը չէր. պարզվեց, որ մենք ոչիտի կարողանանք խոնարհ լինել նրանց (մեծերի) առջեւ եւ *«ոչիտի մեր խաչը գորացնենք՝ դրանով փրկելով մեր երկիրը»:*

«Առավոտը» խորհրդարանի խոսնակից փորձեց ճշտել, թե եթե վերջինս արտասահմանյան համալսարանների *(«մեկ համալսարանի»՝* ճշտեց ոչն Խաչատրյանը) ակադեմիկոս է, չի՞ հավակնում համալրել նաեւ մեր հայոց կաճառի ակադեմիկոսների նոսրացող շարքերը: *«Դա ինձ համար մեծ պատիվ կլիներ առագայում: Ես, իհարկե, չեմ թողնում գիտական աշխատանքը: Ես ինքս գիտությունից եւ կրթությունից եկած մարդ եմ, եւ գիտական աշխարհն ինձ համար շատ հոգեհարազատ է: Եվ ակադեմիկոսների հետ իմ մտերմությունը ինձ համար նաեւ մեծ հոգարտություն է»:*

Ըստ Արմեն Խաչատրյանի՝ գիտնականներն առհասարակ չոիտի զբաղվեն սոցիալական մաղ ոոբլեմներով (որքան հասկացանք՝ նույնը նաեւ Աժ նախագահները, պատգամավորները եւս). *«Գիտնականի միտքը պետք է զբաղվի շատ ավելի ընտրյալ, լուրջ հարցերով»:* Ապա գնաց խոստումների շարքը, թե *«մենք ոչիտի խիստ կարեւորենք, ստեղծենք լավագույն պայմաններ»:* «Գիտության մասին» օրենքը՝ ըստ խորհրդարանի նախագահի, ընդգրկված է Ազգային ժողովի մեծ օրակարգում: Եվ որ այդ օրենքի համաճայն՝ խորհրդարանի արտաբյուջետային որոշ միջոցներ պետք է հատկացվեն Ակադեմիային... Պետք է պաշտպանել յուրաքանչյուրի շահերն այս կառակցությամբ, տրվեն (ժամանակից) Ակադեմիայի վճարները:

Այսքան խոսքերից ու խոստումներից Ֆադեյ Սարգսյանը դարձյալ հուզվեց, չգիտես ինչու, որն Սարգսյանը, որը միշտ գոնե մեր իշխանավորների հարգանքի եւ ուշադրության կենտրոնում է եղել, ոչ մի ակնկալիք չուներ, թե իր ծննդյան 77-ամյակին այս աստիճան պատվարժան եւ ներկայանալի հյուր կունենար (այն էլ առավոտյան ժամը 11-ին). *«Ես շա՜տ շնորհակալ եմ Արմեն Ավագովիչին՝ ցուցաբերած ուշադրության համար: Անկեղծորեն ասում եմ, որ այս այցելությունը համարում եմ մեծ օգնություն մեր Ակադեմիային»:*

Սակայն որն Խաչատրյանը իր ներկայությամբ միակ ցվերը չէր. քիչ անց եկավ «Գրանդ քեդիի» ներկայացուցիչը՝ քաղցրեղենի մի հսկայական զամբյուղով: Հաշվի առնելով Ֆադեյ Սարգսյանի արմատները՝ զամբյուղի կենտրոնում շոկոլադե սասունցի էր կանգնած՝ իր հրացանով: Եվ լավ էր, թե չէ հավաքված լրագրողներիս սկզբում թվաց, թե դա ինքը՝ Ֆադեյ Սարգսյանն է, որի շոկոլադե տարբերակը, չենք կասկածում, սիրով կուտեր Արմեն Խաչատրյանը: Եվ ո՛չ միայն նա:

ԼԻԼԻԹ ԱՎԱԳՅԱՆ